

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

Արևմտեան կողմում եւ, 2 ժամկէպ հնաւորութեան վրա, Մազան կոչված ձորում, Բլբլան անունով աղբիւրից քիչ հեռու, դնւում է նոյաբէս մի աւելիակ վանքի սրբանաշ թաղիւրից շինած, վանքը բաղկացած է երկու սեղանատնից, առաջինը դժբան հետեի վրա, դրսի կողմից, քանդակագործած է երեք խաղողի տղիւղով, իսկ ներսից, ձախ կողմում, պատի մէջ, քարի վրա փորագրած է մի խաչ եւ տակը դրած: «Ասքը խաչ թաղեկոսէ Տիրատէրին»: Երկրորդ սեղանատան պատնարադի սեղանի առաջ ընկած է նոյնպէս մի խաչ, որի վերին կողմում փորագրված էր տառեր, որոնք բաւական

Տաճկաստանի հայ հասարակութեան մէջ աւելի ճիշդ կերպով պահպանուել է եկեղեցու և եկեղեցական կառավարութեան ժողովրդականութիւնը: Այնտեղ պատրիարքը, թեմական առաջնորդը, ծխական քահանան, բոլորը ընտրուում են ժողովրդից: Կաթողիկոսի ընտրութեան վերաբերութեամբ տաճկաստանցիք նոյնպէս պահպանել են իրանց ժողովրդական իրաւունքները: Այդ պարզ անհամբեր է այն պաշտօնական զրուիւններէր, որով նրանք մասնակցել են մեր կաթողիկոսների ընտրութիւնների մէջ: Նրանցից երեւում է, որ թէ պատրիարքները և թէ թեմական առաջնորդները առանց ժողովրդի համաձայնութեան առանձին կամք կամ ձայն չեն ունեցել:

Յիշեալ սովորութիւնը աւելի կանոնաւոր կերպարանք ստացաւ Կ. Պօլսի ազգային սահմանադրութեան հաստատուելուց յետոյ, երբ ազգային երեսփոխանական ժողովը իր պատրիարքի նախագահութեամբ դարձաւ ամբողջ Տաճկաստանի հայ ժողովրդի ներկայացուցիչ: Իսկ սահմանադրութեան հաստատուելուց առաջ, Տաճկաստանի պատրիարքարանները (Կ. Պօլսի և Երուսաղէմի) և բոլոր թեմական առաջնորդները մասնակցում էին Էջմիածնի կաթողիկոսի ընտրութեանը առանձին-առանձին: Եւ որովհետեւ զանազան համագումարների պատճառով նրանք չէին կարողանում անձամբ ներկայանալ կամ յատուկ պատգամաւորներ ուղարկել այդ պատճառով իրանց ցանկութիւնը յայտնում էին զբաւոր կերպով: Նրանց թղթերը ծառայում են մեզ համար՝ որպէս հաստատուն ապացոյցների, որ աշխարհականների և հոգեւորականների ձայները երբեք բաժանված չեն եղել միմեանցից, այլ նրանց մէջ եղել է միշտ կատարեալ համաձայնութիւն: Որովհետեւ երբեք չէ պատահել որ թեմի ժողովուրդը մէկ ընտրելի համար ձայն տար, իսկ թեմական առաջնորդը կամ պատրիարքը մի ուրիշ ընտրելի համար ձայն տար: Թէ ժողովրդի ներկայացուցիչները և թէ հոգեւորականութեան ներկայացուցիչները միշտ միասին են գրել իրանց թղթերը, միասին են ստորագրել և փոխադրած համաձայնութեամբ ուղարկել են Էջմիածին:

Մեր եկեղեցու այդ հիւսանդ սովորութիւնները ի նկատի առնելով, մենք կարծում ենք, որ մեր, Ռուսաստանի, թեմա-

կան առաջնորդներն ևս պետք է համաձայնութիւն կայացնեն իրանց թեմական հասարակութեան հետ և իրանց ձայները չառանձնացնեն աշխարհական պատգամաւորների ձայնից: Այդ է պահանջում մեր ժողովրդական եկեղեցու ոգին, այդ է պահանջում և եկեղեցու շահերը—իսկ այլապէս, մենք կը ստեղծէինք մի կղերական փնասակար ուղղութիւն, որ իր առանձին շահերը, նպատակները և ձգտումներ կունենար...

Մէլիքզադէ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ԱԽԱՒՔԱՒԱՌՑ մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի նահանգի պետական ուսումնարանների դիւրեկտօր պ. Գարսիին հասնելով Ախալցխայի, այցելեց յաղաքային ուսումնարանը, ասում են, որ պ. Գարսիին այցելել է նաև հայոց հոգեւոր դպրոցները: Ախալցխայի պ. Գարսիին ուղարկվում է Ախալքալաք, այնտեղի ուսումնարանները այցելելու համար:

Նոյն տեղից մեզ հաղորդում են, որ ուսաց սիրողների խումբը Ախալցխայում ներկայացում ենք է տալիս, որտեղ յաճախողների մեծամասնութիւնը հայեր են: Ցանկալի է, ասում է մեր թղթ-թակիցը, որ մի սիրողների խումբ կազմվել նաև հայերից, որոնք հայերէն լեզուով ներկայացումներ տալով կը գրաւէին Ախալցխայի ամբողջ հայ հասարակութեան համակրութիւնը: Ախալցխայի ժողովուրդը դուրս է առ հասարակ այդպիսի դուար-ձութիւններից:

ԳՐԻՌՈՅ մեզ գրում են, որ եկող յունկարից կամ սեպտեմբերից, պ. Աղայեանցի առաջարկութեամբ Գրիւում բացվելու է մանկական պարտէզ, որիւղեաց դպրոցում ևս բացվելու է երկրորդ դասարանը, և այսպէս շարունակվել բացվելու դասարաններ թէ օրիորդաց և թէ տղայաց դպրոցում: Մտադրութիւն կայ, եթէ միջոցներ կը ներեն, Գրիւի հայոց ծխական դպրոցը միջնակարգ դարձնել:

Նոյն տեղից մեզ հաղորդում են հետեւեալը. «Այժմ մեր ուսումնարանը նիւթագէտ ապահոված կարելի է համարել: Եկող յունկարից Գրիւի հայոց ուսումնարանը կունենայ տարեկան 3000 ռ. և կամուս: Մոմի կապալը, որ առաջ տուած էր 780 ռուբլով, այս տարի բարձրացած 1800 ռ. ուսումնարանապետական մի շինութիւն վարձով է տրվում տարեկան 700 ռ., բացի դրանցից մօտ 500 ռ. գոյանում է եկեղեցիներից, կրպակներից և

կողմից գեղացւոց կրած տառապանքները, իր սեպտական միջոցներով և մեծ աշխատանքով 250 սաթէն հեռաւորութեամբ սարերի միջից բերել է տվել մի գեղեցիկ ջուր և կանգնացրել գիւղի վերեւ ծայրում. վրան շինած է մի մատուռ, իսկ առջևը մի քարեայ աւազան: Աղբիւրի ջուրը, չնորհիւ կառուցող վարպետի անհմտութեան, այժմ կտրվել է և կոյսը մտադրութիւն ունի եկող դարձնել ջուրից շինել տալ: Գիւղացիների առասարակ շատ չնորհալի են արժ. Մանուկ կոյսից նրա կրած անչափ նեղութիւնների համար: Ինչպէս ասում են այդ ջրի վրա ծախված է աւելի քան 1000 ռ. բացի անձնական աշխատանքից:

Որնակից երեք ժամու ճանապարհի վրա է Հաղբաւ գիւղը. սա նոյնպէս լեռնային երկիր է և ունի 60 հայ տուն, որոնք պարտավում են վերև յիշած գեղական անտառութեամբ. խօստում են իսկ Վարաբաղի բարբառում: Այստեղ է ՍՈՒՐԵՆԶ ան կոչված հուշակոթ մեծաղբիւ վանքը, որը շինել է Աշուտ Ուրբանաշի կլին թագուհի Անայը: Սրբատաշ քարերից և ունի 3 սեղան պատարապի: Ձախ կողմում գտնվում է եկեղեցի սուրբ Գրիգոր Լուսաւորչու անունով, որը նոյնպէս ունի ինն սեղան պատարապի, իսկ աջ կողմում մի գրաբէթաւոր մեծ եկեղեցի Աստուածածոր անունով, կան և մի քանի այլ մատուռներ: Վանքի մի բաւական մեծ մատուռ, որ ասում են գրատուն է եղած, այժմ մաւան է, որտեղ գետեղում են վանքի արդիւններից հաւաքված գինին և այլն, շատ

ուխտատեղիներից: Ո՛վ կը մտածէր, որ տեղացիները մեր ուսումնարանին փող նուիրէին: Նուէրները գումարը հասնում է 1200 ռուբլու, թէպէտ ումանք դեռ վճարած չեն:

Մեզ հաղորդում են ԳՐԻՌՈՅ հետեւեալը. «Գրու գատուր, չը նայելով այն բանին, որ բաւականին մեծ գիւղեր ունի, որոնք կարող են պահել ուսումնարաններ, միայն երկու հայոց գիւղական ուսումնարան ունի՝ Սուրամուս և Յիսնիվալում, իսկ միւս մեծ գիւղերը մնում են առանց ուսումնարանների: Եւ կը թւում մի քանի գիւղեր, որտեղ հայերի թիւը բաւականաչափ է և ուսումնարանի կարօտութիւն կայ, այն է՝ Ախալքալաք, Ձէգլի, Կաթիլիսէլ, Կարաէթ և Ուլիսիսիսէլ»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԳԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽԱՐԿՈՎ, 21 գեկտեմբերի: Երէկ գիշեր հրդեհ ընկաւ առեւտրական կլուբի շինութեան մէջ:

ԲԱՄԲՈՒՆ, 21 գեկտեմբերի: Պարոն Բաղդէնիօի վասիլեվիկա կառուածքում, Գոնեցկայա երկաթուղու Նատաւելիկա կայարանում մօտ գտնված է պղնձ հանք:

ՏԱՄԲՈՎ, 21 գեկտեմբերի: Գուժան որոշեց քաղաքային հասարակական բանկի դիւրեկտօրների և անդամների կրեդիտը սահմանափակել 10,000 ռուբլով իւրաքանչիւրին:

ՅԱՐԻՑԻՆ, 21 գեկտեմբերի: Այսօր Գրեհ-գէ-Յարիցիների երկաթուղու ծառայողական գնացքը, երկաթուղու վարչական բոլոր անձինքներով, կայարանից Սոխանօի նաւահանգիստը անցնելու ժամանակ վեց սաթէն բարձրութիւնից ձորը ընկաւ: Բոլոր ճանապարհորդները կենդանի մնացին:

ՄՈԳԻԼԵՎՈՎ-ՊՈԼՈՒՍԿԻ, 21 գեկտեմբերի: Պօլոսկի շաքարէ գործարանատէրերը մասշին են Նաւոյօլսկի գաւառի մէջ շաքար պատրաստելու ուսումնարան հիմնել:

ԼՕՆԳՈՆ, 21 գեկտեմբերի: Պաշտօնապէս յայտնված է անգլիական հիւպատոսի իրաւասութեան ոչնչացնելը Տունիսի մէջ և այդ պատճառով անգլիական հպատակների գործերը կենթարկվել տեղական դատարաններին և ոչ թէ հիւպատոսների դատաստանին:

ՀՈՒՄ, 21 գեկտեմբերի: Ֆրանսիայի և Իտալիայի մէջ համաձայնութիւն է կայացրած հիւպատոսական իրաւասութեան մասին Տունիսում:

Կեդոտտ դրութեամբ: Մեծ եկեղեցու դռնի արևելեան ճակատում քարից քանդակագործած է Սմբատ արեւելաբաղլի և Գաբրէլ թագաւորների պատկերները իրանց թագաւորական վարսակաւներով: Նրանք իրանց ձեռքին բռնած ունեն մի փոքրիկ եկեղեցի:

Որպէս Սանահուն, նոյնպէս և այս վանքի քարերի վրա փորագրված են վանքի նորոգողների նուիրատուների և միաբանների արձանագրութիւնները, որով յիշում են թէ որին ինչու համար ինչ օր պէտք է պատարագում յիշել կամ նրա համար պատարագ մատուցանել: Այս վանքում ևս գտնվում են մի քանի թագաւորների և երեւելի իշխանների գերեզմաններ:

Վանահայրն է Գովէէի վարդապետ Նրիսիկեանցը, որի հակողութեան տալիս է ուսումնարանը, որ շատ անախտանքից դրութեան մէջ է: Ասում են, որ Գովէի վարդապետը այստեղ կարողվել խօսապահ է թէ վանքի եկամուտով և թէ իր սեպական միջոցներով ուսումնարանի համար մի նոր շինութիւն կանգնացնել, ուսումնարանը ծաղկած դրութեան մէջ պահել, իրան գետի վրա քարէ ամուր կամուրջ կառուցանել և շաղաթի ճանապարհը ընդարձակել: հարկել գեղացիների յարաբերութիւնները միւս տեղերի հետ հեշտացնելու համար *), սակայն ան 5 տարի է ոչինչ է արած,

*) Շաղաթի ճանապարհը մի այնպիսի նեղ և անձուկ ուղի է, որ սալ բոլորովին չէ բանում, ձիով էլ շատ դժուար է գնալ. այդ ճանապարհը անցնելու համար հարկաւոր է ոտով մանգալ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 գեկտեմբերի: Օմսկի գիւղուորական շրջանի կառավարչի օգնական գեներալ-մայոր Յիկինսկի նշանակվում է Սեմիպալատինսկի շրջանի գիւղուորական նահանգապետ: «Journal de St. Petersburg» հերթում է օտար լրագիրների լուրերը, իբր թէ Ռուսաստանը խորհուրդ է տալիս Ձինաստանին մաքրել Բալ-Նինգ: Լրագիրը ասում է, որ միջազգային յարաբերութիւնների ժամանակ խորհուրդներ տալիս են միայն այն ժամանակ, երբ նրանց հարցնում են: Իսկ Ռուսաստանը բաժանում է ընդհանուր ցանկութիւնը, որ Պեկին և Փարիզ խնայի գործին և անհամաձայնութիւնը առանց արիւնհեղութեան վերջանայ: Ձինուորական գլխաւոր դատարանը ոչնչացրեց Օդէսայի գիւղուորական դատարանի դատաւճիւր մայոր Կրաւէնկօի և վաճառական Պերգամենտի ինտենդանտային գործի մասին և որոշեց գործը նորից քննել Օդէսայի գիւղուորական նահանգական դատարանի մէջ անդամների նոր կազմակերպութեամբ: Վերաքննող մասնաժողովը, որ քննում է գործըները գիւղու և շաքարի ակցիզը հաշուելու համար, շուտով կոչնչացվի և կը փոխարինվի տէնիկական առանձին մասնաժողովով գործունէութեան աւելի ընդարձակ շրջանով: Երէկ ներքին գործերի մի-նիստրի օգնական Գուրնօվի և պրօֆէսօր Բօտկինի ներկայութեամբ դէլինֆէկցիայի փորձեր կատարվեցան նորերում, կառուցված քաղաքային շողէ գործարանում: Ցայ-անվեցաւ, որ մէկ ու կէս ժամվայ ընթացքում շողով դէլինֆէկցիայի ենթարկվում է 100 պուդ սպիտակեղէն: Կաշուէ իրեղէնները ենթարկվում են դէլինֆէկցիայի քիմիական ձեռք: Կատարված փորձերը անողկեցան: Երէկ կատարվեցաւ Նեվսկի փողոցը ելեկտրական լուսով լուսաւորելու փորձը, որ շատ աղօղ չէր:

ՀՈՒՄ, 22 գեկտեմբերի: Թագաւորը ընդունեց Գրեպոլին, որ իտալական նոր դեսպան է նշանակված ուսաց կառավարութեան մօտ: Գեսպանը շաքարի վերջը Ս. Պետերբուրգ է ուղևորվում:

ՏՈՐՈՆՏՈ, 22 գեկտեմբերի: Կանադայի մէջ ճանապարհորդական գնացքը հանդիպեցաւ ապրանքների գնացքին, որի ժամանակ 27 հոգի սպանվեցան և 30 այլանդակվեցան:

Խաբաղի-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԻՆԻ

միայն ուսումնարանի հին շինութիւնը քանդել և նրա տեղը մի անհատատ սննեակ է շինել ուսումնարանի համար և հոկտեմբերի վերջին ուսուցիչ հրաւիրել, բայց դեռ աշակերտներ չը կան, որովհետեւ ուսումնարանի չըբոյութեան պատճառով բոլոր կարգադրողները մասամբ գիւղական պարագմունքների յետից են դիպած, մասամբ էլ ցրված, մինչդեռ Գովէի վարդապետից առաջ այնտեղի ուսումնարանի հին շինութիւնում մշտնջենապէս ուսանում էին աւելի քան 30 աշակերտներ, որոնք մեծ մասամբ հաւաքվում էին մօտակայ գիւղերից: Շատ ցաւալի է, որ մեր այդ հայր սուրբերը այդքան անտարբեր աչքով են նայում ուսումնարանի վրա, որչափ ցանկալի է, որ ամենայն ջանք գործ դրվէր այդտեղի ուսումնարանը գոնէ փոքր ինչ կարգին պահել, որ մի ծաղիկ կը լինէր այդ կողմում: Կարծում եմ, որ վանքի հասոյթները այդպիսի մի ուսումնարան կարգին պահելու համար շատ հեշտութեամբ կը բաւեն, եթէ ըստ պատշաճայն գործադրվեն:

Առ այժմ վերջացում եմ իմ փոքրիկ ուղեորութիւն, բաւականաչափ աչքանում և աւելի հետաքրքիր ու մանրամասն տեղեկութիւններ թողնելով հմուտ անձինքներին:

Յովհաննէս Ս. Ստեփանեանց

հոկտեմբերին էլ բացվել է չնորհիւ իշխանուհի Քալի Արդութեանցի *): Սանահին ունի մի քահանայ, որը մի հմուտ փայլի է, ինչպէս խորհուրդում է ինքն. նա շատ հմայութիւններով և դանազան գրեթէ բաւականին հիւսանքներ է աւտղջացրել և կորուստներ գտել. կեցցէ...

Սանահնուց քիչ հեռու գտնվում է մի անապին քարայր, որի մէջ շինած են մեծ քանակութեամբ սննեակներ ընակելու համար. ասում են, որ տեղական ժողովուրդը արիւնքների յարձակման ժամանակ պատապարվել է այդ քարանձաւում, որը այնքան մեծ է, որ իր մէջ գետեղել է Լուսնայ գաւառի աղբաբնակութեան մեծ մասը:

Սանահնուց 5 վերստաչափ հեռի է Ուրնակ հայաբնակ գիւղը, որ ունի ընդամեն 15 հայ տուն և մի քարաշէն եկեղեցի մի քահանայով. եկեղեցին, ինչպէս ծանօթութիւնում յիշեցի, շինել է տվել իշխանուհի Քալի Արդութեանցը 1863 թւին ի յիշատակ իր եղբայր Ստեփաննոսի: Այս գիւղի ղեկը թէ և լեռնային, սակայն գուրդ է մաքուր քիչ: Յիշեալ արժանի է Թիֆլիսի կուսանոցի միաբան սարկաւազուհի Մանուկ կոյս Լորիս-Մելի-թեանցի օգտաւէտ գործը. արժ. կոյսը զգալով ջրի

*) Իշխանուհի Քալի Արդութեանցը Նրիսիկեանցաւոր Արդութեանց ցեղից, մօտ հարիւր տարեկան մի փր, աշխոյժ և բարեխիտ պատու է, մեծ վարկ և համարում ունի այստեղ և յայտնի է իր բարեբաւութիւններով. սա է միշտ հորում ուսումնարանի և գիւղացոց բարօրութեան համար. սա է շինել տուել Ուրնակ մօտակայ գիւղի քարաշէն եկեղեցին և այլն:

ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրակի, ամսին 25-ին, առաւօտան 11 ժամին, Արծրունու թատրոնում, լինելու է ՀԱՅՈՑ ԿՈՎԱՍՍԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ընդհանուր ժողովը խորհրդի 5 անդամ և 5 փոխանդամ ընտրելու համար:

ՍԱՊՈՆ

Կիցերինի, նշէ, վարդի, կարբոնի, լաւաւի, բրնձի և այլն մեծ քանակութեամբ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ Մէջ: Նոյն տեղը օղէկօյն և տուալէտի ուրիշ պատկանելիքներ 25% էփան քան թէ ուրիշ տեղ:

1—12

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ալէքսանդր Երիցեանի

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻԹԱՐԵՆԻՔ

գինն է 1 ռուբլ:

Ծախվում է «Կենտրոնական» գրաւածառանոցում:

3—3

ԿԱԼԵԹԻ ԳԻՆԵՆԵՐ

«ԱԼԱՋԱՆ» ԿԻՊԱՆԻՑ

Սօլջակի փողոց, տուն № 12 (Կարուծական բանկի հանդէպ): Տօների համար ստացված են մեծ քանակութեամբ ամենալաւ տեսակի գինիներ (20 Կ. մինչև 1 ռուբլ):

3—3 (Ը. Գ. Շ.)

ЖЕСТЯНКА 20 ЧАШЕКЪ 1 РУБ.



ПРИ ТРЕБ. ПОЧТОЙ ПРИЛАГАТЬ НА ОТПРАВКУ.

(5. 10. 25) 22—24

Մամուլի տակից լոյս տեսաւ

«ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ»

Ճանապարհորդական տպաւորութիւնների նկարագիր Գ. Լ. Մորգովցեվի. (Թիֆլիսից սկսած մինչև ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ) Մաքուր տպագրութիւն, ազնիւ թղթի վրա: Գինն է 1 ռուբլ հանդերձ ճանապարհահաճախով:

Ծախվում է Եւրոշիում փոխադրողի մօտ, որին կարելի է գտնուի այս հասցեով «Шуша, Аракегу Бабаханиянц».

Ծանօթ. Գրքին յարգելի բաժանորդներին յայտնում եմ ի գիտութիւն, որ ամենաքննել շուտով կը ստանան իրանց գրքերը: Ա. Բաբախանյանց: 9—10

Խոնարհարար խնդրում եմ

այն անձինքներին, որոնց ուղարկված է «Ոսկի Աքաղաղ» գրքից վաճառելու համար, բարեհաճեն փողերը և մնացած օրինակներս մինչև յունվարը հասցնել ինձ. իսկ նոր ցանկացողները թող դիմեն Կենտրոնական, Զ. Գրիգորեանցի և Եւսէփ Երզնկանցի գրաւածառանոցները, նոյնպէս և ինձ հետեւող հասցեով. Тифлисѣ, Огане-су Степанянцу.

Յայտնի և տաղանդաւոր բանաստեղծ ՍԵՅԱՏԻ (Կապիտան Պետրոս-բէգ Մատաթեանց) ընտիր բայց անտիպ մնացած բանաստեղծութիւնները փողոց տակից և կորստեան ճանապարհից ազատելու համար հատորներով հեղձօտեմ լոյս աշխարհ պիտի հանեմ: Ամենայն ինչ պատրաստ շուտով մամուլի տակ կը մտնէ իմ սեպական տպարանում արագատիպ մեքենայով: Առ այժմ կը ապրի երեք հատորիկը միասին, կանխիկ բաժանորդագրողներին համար մի ռուբլի տպագրվելուց յետոյ գինը կը բոլոր ձրանայ:

Ցանկացողները թող շուտով մեկ հասցեն իրանց բաժանորդագրին հետևեալ հասցեով.

Въ Баку. Въ типографію Алек-сандра К. Касабова.

Ա. Ղաապեանց: 10—20

Էփան գնով ծախվում են ԲԵԼԳԻԱՅԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ, ՀՐԱՑԱՆ և ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, ՎԻԵՆԱՅԻ ԹՈՆԵԺ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՌՈՒՆԵՐ և այլն: Գալերէյ Արժունի № 181. Գփօրցօվայ փողոցի վըրա:

6—10

4000 ԱՓՍԵՆԵՐ 1-ին տեսակի 2 ր. դիմինը, զանակներ և պատառաքանքներ, թէյ առաջին հունձի 1 ր. 60 Կ. հիանալի, ԿՕՆՖԵԿՏՆԵՐ հազի գէմ և զանազան տեսակ մուրաբանք, էսէնցիա կակաօ, պիկուլի, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, Փրանէլ և այլն մեծ քանակութեամբ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: Նոյն տեղը ամեն ժամանակ սնդկական և ֆրանսիական երկարթէ մածակախնր և ուրիշ անբանքներ ծախվում են 30% էփան քան թէ ուրիշ տեղ:

8—8

Վիեննայից ստացվեցաւ ու. «Կոչի»

Վ. Է. Պ. Ը.

«ԱՐՏԱՒԱԶԻ Լ ՄԱՐԿԱՐԷՏ

կամ

ԻՐԱԿԱՆ ՎԷՊ ՄԻ ՀԱՅ ԲԺԻՇԿ ՈՒՍԱՆՈՂԻՔ

Վաճառվում է «Կենտրոնական գրաւածառանոցում», գինն է 1 ր. 4—5

Մ. Ն. ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՇԵԱՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵՆԱԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՈՒՉԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆԱՅԻ ԿԱՐԱՄԻՔ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիմինը, բազկաթոռներ 6 ր., զիվաններ 12—25 ր., կաշեղի, մանկական աթոռներ և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀԱՍԱԼՆԵՐ, ճանապարհի մահալանքներ, պահարաններ, ծաղիղ սամփանքներ: Չեմօգաններ 2 ր. 75 Կ.—26 ր., սակօյաժ ձեռքի և ուրիշ կակաօ, ճանապարհի սուսկանք, ճԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿԱՐ 5 ր. 50 Կ.—30 ր.:

Սամփանքներ, խոհանոցի պղնձե ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ութոններ և աղաւթ գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒՍՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուսնաւոր պղնձե և ժեստի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., առաւելոր հայելիներ 2 ր. 40 Կ.—13 ր., զանազան մետաղների մանկանքներ 1 ր.—15 ր., սեղանի զգալներ 4 ր. 50 Կ. և թանդ, թէյի զգալներ Ֆրանսի, մեյսթօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էփան, քան թէ ուրիշ տեղ, զանակներ, պատառաքանքներ 2 ր.—26 ր.:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՆԿԵՆԻ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատի և երկաթէ զանակներ, յայտնի գործարաններէ, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 Կ. և աւելի:

ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 Կ.—35 ր., պատրոններ ընկօլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալանքներ, կշիռներ: Անգլիական և ամերիկական կէօնկա 50 Կ.—2 ր. արշներ:

Մշտապէս ունեւ 10,000 Ֆ. ԹէՅ Պօպօլ եղբայրների, կաֆէ ՄԻՍԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն Էյնեմի, ԲԵՆԳԱԼԻԻ սիգարներ, հոտաւտ Չուր (Օգրկօյն) ծխող փողիք, պուզրա, գիրքերին սապօն և այլն, աւելի էփան քան թէ ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ զարանքերէլի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, զրամարդ, քսանիք, սանդղներ, շապիկներ, լայիկ ձեռնոցներ կանանց, զինուորական զանէի ձեռնոցներ, գարուա, թերիք, բրօնզի և մարմարի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիանք, զրչակօթեր, սուրգուչ, փօսաթ թուղթ, ծրարներ և այլն:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և գերատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկանքներ: Վերև յիշված բոլոր առարկանքները ունեւ մեծ քանակութեամբ և ստանում եւ ԱՐՏԱՒԱԶՄԱՆԻ Լ ՌՈՒՍԱՍԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ: Օտարաքաղաքացիք կարող են գինել. Тифлисѣ. М. Н. ТЕРЬ-НИКОГОСОВУ. 92—100

ՄԱՆՈՒՅԱԿՏՈՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Զ Ի Ն Գ Ե Ր

Ն Ի Ռ Ի Օ Ր Կ Ի Մ Է Ջ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ:

Ծախում է ամենալաւ համարված կարեմքեւաններ նպաստող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք պահպանում են փայնաւուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թիթե ընթացք ունեն աշխատանքի ժամանակ, այնպէս որ ամենալոյս և ճեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց յոթերը սպառելու: Ծախվում է:

ԿԷՍ ՄԻԼԻՕՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱԻԵԼԻ ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Ձիւգերի կարեմքեւանների համար:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. Ձիւգերի իսկական կարեմքեւանները մեծ վարկ ունեն, որովհետև իրանց զեղեցիկ յատկութիւններով ամենքին զմայլեցնում են և այդ պատճառով ուրիշ գործարանները նրանց կեղծում են և ծախում են Ձիւգերի իսկական կարեմքեւանների տեղ: Ձգուշացնում եմ ձեզ, որ Ձիւգերի իսկական իւրաքանչիւր կարեմքեւան The Singer Manufacturing Co- Ֆիրմայից ունի գործարանի գրօշման մեքենայի կօթի և մամուլի վրա. The Singer Manufacturing Co-.

Գ. Ն. Ե. Գ. Լ. Ի. Ն. Գ. Ե. Բ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս. Գ. Օ. Լ. Օ. Վ. Ի. Ն. Ս. Կ. Ի. Փ. Ո. Ղ. Ո. Ց. Տ. Ո. Ի. Մ. Ի. Բ. Ի. Մ. Ա. Ն. Օ. Վ. Ի.

ԲԱՐՈՒՄԻ մէջ Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի:

ԲՈՒՐԱՅԻ մէջ Միխայիլօվսկայա փողոց, տուն Ընէկչերի:

ԲԱՐՈՒՄԻ մէջ Միխայիլօվսկայա փողոց, տուն Միրզա-Աւազօվի:

Իւրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Ձիւգերի ամենաօգտակար և իսկական կարեմքեւան կարելի է զնել փոքր մուտքերով, այսինքն շաքաթական 1 ր. 50 Կ. վճարելով առանց իսկական գինը բարձրացնելու: Հնոցած մեքենաները խանութը փոփոխում է:

31—50 (1)